

“ՄՇԱԿՈՅԹ” ԳՐԱՏՈՒՆ

Մատենադար թիւ 3

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՄԻՈՒ ԼՅԷԱ ՄԱԿԱՐԻ



Ե. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ԿԻԹԵԼՄԵՐԿ»

Կ. Ն. ՄԱԳԱՍՏԵԱՆ

Ս Թ Ա Ն Պ Ո Ւ Լ

1 9 3 6

25 ՂՐՇ.

5 ԿՐՆՔ.

891.99

h-75

891.99
h-75

Կ. Կ. Մ.

14 FEB 2011
1936

“ՄՇԱԿՈՅՔ” ԳՐԱՏՈՒՆ

Մատենադար թիւ 3

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՄԻՈՒ ԼԵՎ ՄԱՀԱՐԻ

ԵՒ

ԻՐ ՎԵՐԱԴԱՐՁԸ



Ե. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



2347

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԵՆՏՐՈՆԵՐԿ
Կ. Ե. ՄԱՀԱԿԵԱՆ
Ս Թ Ա Ն Պ Ո Ւ Լ
1 9 3 6

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

ՂԿ

29 APR 2013

32700



Հրատարակչական
և
Գրատուն

Տեղ եւ Տնօրէն Թ. ԱԶԱՏԵԱՆ
Հասցէ. — Օթանալու, Կալաթա, Պիլլօր
փողոց Կիւլ Գամանքօ խան, քիւ 8—9:



692-2011

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

[ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ]

Տաղանդաւոր բերրող Ա. Իսահակեանի ծննդեան 60 ամեակին ի պատիւ յարմար նկատեցինք վերահրատարակել ԱՌՈՒ ԼԱ. ԼԱ. ՄԱՀԱՐԻՆ, որ իր գեղարուեստական բարձր յատկանիւններէն զատ, ա՛յնքան նեղրիս ու հարազատ ցոյացումն է արաք մեծ բա. նասեղծին ընկերային ըմբռնումներուն եւ իմաստասիրական տեսութիւններուն:

Վասակաւոր բերրող Ա. ԱՅԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ Խորհրդային Հայաստանի մշակութային վերելի ջոհակիրներէն ու եռանդուն յառաջապահներէն մէկն է այսօր:

Կուսակցականի մը գիծեր իր կեանքէն ուրուն մասնակցելուն պատճառով: Յետոյ կը մեկնի Գերմանիա, ուր կը հետեւի համալսարանական դասախօսութեանց (ազգագրութիւն, գրականութիւն եւ մարդաբանութիւն):

Իսահակեան գրել կ'սկսի շատ կանուխէն, հազիւ 11-12 տարեկան: Մամուլին մէջ իր ստորագրութիւնը առաջին անգամ կ'երևայ 1992ին: Հետզհետէ կ'աւելանայ իր Սփարս-Տարագիւն,



Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

գրական քննունդն գործունէութենէն. —

Ծնած է 1875ին, Սիւնիքի (Լենինական) մէջ: Տեղական հագեւոր դպրոցը իր նախնական կրթութիւնն ստանալէ վերջ, Ա. Իսահակեան կ'անցնի Գեորգեան ճեմարան, որուն Ե. դասարանը ըստիպումով կ'ըլլայ ձգել՝ աւակերտական խրոստիւքիւն:

«Արաբախի», «Մուրեխի», «Անտիս»-ին և այլ պարբերականներու: Մեր կը գրէ նաեւ «Հայ Գուսաֆ» ծածկանունով:

1898ին լոյս կ'ընծայէ «Նշ»-ը ու «Լեւհեր» բանաստեղծութեանց հասար, որ շուտով ժողովրդական կը դարձնէ իր անունը: 1903ին կը հրատարակուի իր հերթաւճիւրստ անկի ստուար ժողովածուն:

Ա. Բաաիակեան իր արտայայտութեան ձեւով կը յիշեցնէ Հանրի Հայնէն: Ան համակուած է համառօտարեւոյթի քախիծով: Իր երգերը քարտուուն են վեպի, սիրոյ, կարօսի ու տառապանքի խոր զգայնութիւններով: Ժողովրդական երգեր դարձած են Բաաիակեանի «Որսկան ախպեր», «Մանկալ ես», «Եղարած ես», «Գարսն լացի» և ուրիշները բարան բարան՝ ելլելով հերթաւճիւրստները: Նման երգերու շարք մը ծանօթ է «Ալագեազի մանկներ» անունով:


1903ին, Ա. Բաաիակեան կ'արտայայտէ իր հաշտաւոր արեւելեան պօլէմը «Արու Լալա Մահարի»-ն որ քարգմանուած է մէկէ անկի օտար լեզուներու և արժանացած՝ բազմաթիւ տպագրութեանց: (*)

Մեծաւան ու հոգեբանական այս անգուղակեան սեղծագործութեան հետ, նոյն տեսէն, առիքը կ'ունենանք լոյս ընծայելու Ա. Բաաիակեանի վերջեւ գրի առած «Արու Լալայի Վերադարձը» բանաստեղծութիւնը՝ ընթերցողին բոլորով ընկերային կեանքի երբեմնի յուսկոյն տեսութեանց և արդի հաւատաւոր մարդկութեան անգրադարձ հայեացքին մեկնաբանութիւնը:

Իր վիպական արտայայտութիւններով եւս տիրական դէմք մըն է Ա. Բաաիակեան, որ առողջական պատճառով այժմ Սերայա կը գտնուի, և որուն ծննդեան 60 ամեակը տօնակա վերջերս ևս Հայաստանի և Կովկասի մէջ, այնքան ջերմ խանդավառութեամբ:

Ա.

[*] «Մեծ Անտի» հրատարակչական լոյս տեսիլ ընծայէ նաեւ Արու Լալա Մահարիի բոլորէն քարգմանութիւնը:



ԱՐՈՒ ԼԱԼԱ

ՄԱՀԱՐԻ (*)

Արար բանաստեղծ Վիլիամայ մը և միանգամայն նամակագիր մըն է Արու Լալա Մահարի (Լալա Իլա էլ Մուարրա), ծնած 973ին, Հալէպի մօտ, Մուսրաթ Ին Նիւման անուն տեղը: Չորս տարեկանին ծաղկախոյր կը խլէ անկէ իր աչքերուն լոյսը: Անոր այս դժբախտ կացութիւնը սակայն չ'արգիլելը զայն լաւագոյն դաստիարակութիւն մը ստանալէ հօրը ինամքին ներքեւ:

Արու Լալա Մահարի իր նախնական կրթութիւնը Հալէպի մէջ ստանալէ յետոյ, կը մեկնի Պաղատա: Կը ծանօթանայ Պատրացի Ապտիլ Սէլաթիի որ բաղարին մեծագոյն դրացարաններէն մէկուն գեկաւարն էր ևս ամէն Ուրբաթ, տեղին ազատախօսները իր շուրջը հաւաքելով դասախօսութիւններ կ'ընէր անոնց: Կը մտնէ այս միջավայրէն ներս ու մեծապէս կ'օգտուի այդ դասախօսութիւններէ:

[*] Ծանօթ գրագէտ Յովհաննէս Աւագեան, որուն «Գրական Գեմքեր» անուն հասարէն քաղուած են այս ծանօթութիւնները, Արու Լալա Մահարիի ուսումնասիրութեան աղբիւր ցոյց կուտայ Նիքիլսընի «A Literary History of the Arabs» անուն գիրքը:

րէն : Մօրը հիւանդութեան լուրը առնելուն պէս Մահարա կը դառնայ եւ անոր մահը կը դիմաւորէ : Ասիկա մեծ կոկիծ կը պատճառէ իրեն . կը սգայ իր մօրը մահը այնպիսի տաղերով՝ որոնք լի են խորունկ զգացումներով :

Աբու Լալա Մահարին կը նկատուի արաբական ամենամեծ բանաստեղծներէն եւ ամէնէն խորունկ փիլիսոփաներէն մէկը : Անկախ մտածութեանց տէր, ան չը զիջաւ արքունի բանաստեղծ մը ըլլալու եւ իր տաղանդը ի սպաս դնելու զահա-կալներուն :

Իր բանաստեղծական հատորիկներէն մէկուն յառաջաբանին մէջ անիկա կը պարզէ այս մասին ունեցած իր անկախ ըմբռնումը . «Ես երբեք զգուած չեմ իշխաններուն ականջները իմ ներբողանքի երգերովս, եւ ոչ ալ վարձատրութիւն ստանալու յոյսով գոված եմ անոնցմէ մէկը : »

Կրօնական ըմբռնումներու մասին եւս անտարբեր զտնուած չէ եւ իր չափա-հասութեան տարիքներուն՝ քննադատական վերլուծումներ կատարած է կրօնական, ինչպէս նաեւ ընկերային ու քաղաքական հարցերու նկատմամբ : Այս բոլոր կէ-տերուն մէջ ալ իր նպատակը եղած է որոնել հիմնական եւ անխախտ ճշմարտու-թիւններ : Բարոյագիտութեան միանեծան իշխանութեան հաւատացող փիլիսոփայի իր տեսութիւնն էր որ մտածել տուաւ անոր հետեանալ ամբոյսէն, քաշուիլ անա-պատը եւ հոն գործադրել բարոյագիտական բոլոր պահանջները :

Անէացումի վարդապետութեան կատարեալ հաւատացող մը եղած է Մահարի եւ չափազանց հաւենած՝ դիակիզումի նկատմամբ սնուցուած հնդկական գաղա-փարին :

Յոն Քրէմլը՝ որ ամենէն աւելի ուսումնասիրած է Աբու Լալա Մահարիին կեանքն ու գործը՝ կ'ըսէ թէ անիկա՝ իր գաղափարներով մէկ քանի զար առաջ էր իր ժամանակէն :

Աբու Լալա Մահարիի դաւանանքը այն է թէ մարդկային միտքի արտադ-րոյթն է կրօնքը, եւ մարդիկ կը հաւատան ունակութեան եւ վարժութեան ուժովը, եւ երբեք կանգ չեն առներ նկատելու թէ ճշմարիտ է ան թէ ոչ :

Վերին աստիճանի ցած աչքով կը նայի Մահարի մարդկութեան վրայ : Բո-լոր մարդիկը չար են, ըստ իր հայեցակէտին, եւ ինք ամենաւին խաիր չի դնէր

անոր այս կամ այն մասին մէջ : Այս համոզումը իր մէջ զարգացուցած ըլլալուն պատճառաւ է որ անիկա խորհուրդ կու տայ ամենեւին չվստահել ու եւ մէկուն որքան ալ ազգականական կապերով կ'սպուած ըլլայ ան՝ իրեն : Իր գրութիւններէն

մէկուն մէջ կ'ըսէ . «Ինքն կու տայի, եթէ երբեք աշխարհ այնպէս մարբուէր մարդերէն, ինչպէս խաղախորդուած կաշին մարբուած կ'ըլլայ մազէ : »

* *

Աբու Լալա մահարիի կեանքն ու գործը այսքան համառօտ գիծերու մէջ կարելի չէ անշուշտ ներկայացնել : Ուղեցիներ գաղափար մը միայն տալ անոր էութեան մասին, որ ներշնչարանն եղած է Աւետիք Իսահակեանի համանուն այս երկին :


ԱՐՈՒ ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ

(ԱՐԱՔ ԲԱՆԱՍԵՂԾ X - XI ԴԱՐՈՒՄ)

Արու Լալա Մահարին, հոշակաւոր բանաստեղծը Բաղդադի, երեք տասնեակ տարի ապրեց Խալիֆաների հոյակապ ֆաղափում, ապրեց փառքի եւ վայելքի մեջ, հզօրների եւ մեծասունների հետ սեղան նստեց, գէտունների եւ իմաստունների հետ վեճի մեջ, սիրեց ու փորձեց ընկերներին, եղաւ ուրիշ-ուրիշ ազգերի հայրենիքներում, տեսաւ եւ դիտեց մարդկանց եւ օրհնեցները, եւ նրա խորաքափանց ոգին ճանաչեց մարդուն, ճանաչեց եւ խորագին ասեց մարդուն եւ նրա օրհնեցները:

Եւ որովհետեւ նա չուներ կին եւ երեխաներ՝ իր քոյրը հարսնութիւնը բաժանեց աղջակներին, վերջեց իր ուղերի ֆարաւանը եւ մի գիշեր, երբ Բաղդադը քուն էր մեջ Տիգրիսի նոճիածածկ ափերի վրայ, զաղցնի հեռացաւ ֆաղից . . . :





ԱՐԻՒ ԼԱՎԱ ՄԱՏԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՍՈՒՐԱՆ



Եւ Բարաւանք Արու Լալայի աղբիւրի նման մեղմ կարկաչելով
Քայլում էր հանգիստ նիւնած զիւերով, հնչուն զանգերի անուշ ղողանջով

Հաւասար քայլով չափում էր ճամբէն այն Բարաւանք ոլո՛ր ու մոլո՛ր,
Եւ ղողանջներ ծորում Բաղջրալուր, ողորում էին դաշտեր անդորր:

Մեղկ փափկութեան մէջ Բաղդազն էր նիւնում ջեննաքի շէղ վառ երազներով,
Գիւլիսաններում բլբուլն էր երգում զազէլներն անուշ՝ սիրոյ արցունքով:

Շահաւանները բռնում էին պայծառ ծիծաղով աղամանդեղէն,
բոյր ու համբոյր էր խնկարկում չորս կողմ խալիճաների հեռեկան թիւերէն:

Եւ Բաբայան օրօ՛ր ու շորօ՛ր զնգում էր առաջ ու ետ չէր նայում, —
Անձայր համբէն էր Աբու Լալային բիւր հրապօյրով կանչում, փայփայում.

— «Գնա՛, միտ գնա՛. իմ Բաբայան, եւ ետ մի՛ դարձիր Բալէ՛, կանգ մի՛ առ,
Այսպէս էր խօսում իր սրտի խորում Աբու Մահարին, մեծ բանասէղծը:

Գնա՛ մենաւոր վայրերն ամայի, ազաս, կոյս եւ սուրբ զմրուխտայ հեռուն:
Դէպի արեւը սլացի՛ր, գնա՛ եւ սիրսս այրիւ արեւի սրուն:

Ա՛խ մնա՛ր բարեւ չեմ ասում եւ ձեզ իմ հօր գերեզման, օրօ՛ց մայրական,
Իմ հոգին յաւերժ խռով է ձեզ հետ, հայրենական յա՛րկ, յուշե՛ր մանկական:

Եւ Շահ սիրեցի իմ ընկերների եւ բոյր մարդկանց՝ հեռաւոր, մօտի՛կ,
Եւ սէրս հիմա ի՞նչ դարձաւ քունոս, խայթում է սիրսս հուր ասելութեամբ:

Ասում եմ, ինչ որ սիրել եմ առաջ, ինչ որ սեւել եմ մարդու հոգու մէջ.
Մարդու հոգու մէջ համբել եմ հազար նողկանք ու զարեանք՝ զազիր ու նահիր:

Բայց ես փախչում եմ զարեանքի հազար ու մէկերորդից — կեղծիքից սօս
Որ զարդարում է երեսը մարդու անմեղ սրբերի լուսապսակով:

Մարդկային լեզու՛, դու որ երկնային լազուր շղարշով, բոյրով համբոյրով
Ծածկում ես մարդու դժոխքի հոգու — քորվել ե՞ս արդեօք նումարիս մի խօսք:

Մարդկային լեզու՛, քունաւոր սլաք, մեղրի ծորանով սիրսս խոցեցիր,
Իմ հոգում մեռաւ սիրոյ մի երկինք, մի վառ արեգակ, եւ յոյս, եւ հաւատ:

Գնա՛ անապատ, իմ Բաբայան, վայրի՛ ամայի անապատն այրող,
Եւ իջեա՛նքի այն պղնձացած շէկ ժայռերի տակ, զազանների մօտ:

Խփեմ վրանս, օձ կարիճների բների վրայ խփե՛մ վրանս,
Այնտեղ բիւր անգամ, եւ ապահով է, եւ Բալդր ու անդորր, Բան թէ մարդկանց մօտ:

Քան թէ ընկերի կուրծքը խաբուսիկ, ուր դնում էի գլուխս սիրով,
Կուրծքը ընկերի, որ շղարշում է անդարձ կորսեան անդունդը ստի:

Այնքան ծամանակ, որքան արեւը կ'այրէ Սինայի ճակատը խրոխտ,
Եւ անապատի դեղին շէղջերը ալիքների պէս յորձանքներ կը տան —

Եւ չեմ ցանկանայ տեսնել երեսը մարդկանց. ընկերի, հարազատների:
Եւ չեմ ցանկանայ տեսնել ու լսել նրանց զործերը՝ չա՛ր, ունայն պատի՛ր...»

Եւ վերջին անգամ Աբու Մահարին եւ դարձաւ նայեց նիւհած Բալդադին,
Գարեանով շրջեց ճակատը կնճռոս եւ վարեց ուղիս քաւ պարանոցին:

Սիրով զուգուրեց, չեմ շրջանցներով համբուրեց շուրի աչքերը վնիս,
Եւ քերթիչներից նրա կախեցին անգուսպ արցունքի երկու այրող շիւր:

Անա՛ւ զնգոցով. հանգիստ, միաշափ մեղմ օրօրում էր այն Բաբայանը,
Քայլում էր առաջ դէպի անապատ, կուսական ափե՛ր, անյայտ հեռունե՛ր...:



Եւ ոլորում էր այն փառաւանք բարձր արմատների շարքերի միջով,
Փռնի էր հանում, փռու փառաւան, եւ բարակ ֆամին վարում էր փոշին:

— «Գնա՛, փառաւան, ի՞նչ ենք մենք քողել, որ ափսոսանքով նայենք մեր ետեւ.
Այսպէս էր խօսում իրեն սրի հետ Աբու Մահարին, մեծ բանաստեղծը:

Ի՞նչ կայ մեր ետեւ, որ մենք կարօտով ես դառնանք նուից, իմ փառաւանս,
Թողել ենք ընկե՞ր, կի՞ն ու բարեկա՞մ, փառք ու ընտանի՞ք եւ հարստութիւ՞ն:

Թողել ենք մարդկա՞նց, համայնք, հայրենի՞ք, օրէնք, իրաւունք եւ արդարութիւ՞ն,
Քայլէ՛, կանգ մի՛ առ. քողել ենք միայն շղթայ ու կապանք, կեղծիք ու պատանք: »

Եւ կի՞նն ի՞նչ է որ... խորամանկ, խաբող, արիւնհարբու սարդ, յալիսեան նանիւր.
Որ հացդ է սիրում, համբոյրի մէջ քոյն եւ քո գրկի մէջ ուրիշին ծախում:

Խաբխուլ մակոյկով յանձնուի ծովին, քան քե հաւատա կնոջ երդումին,
Նա-կաւա՛ս, վառա՛ր, մի չքնաղ դժոխք, նրա բերանով Իբլիսն է խօսում:

Դու երազել ես աստղը հեռաւոր, հրեշտակաքեւ շուշանք մախուր,
Որ քո վերքերին բալասան լինի, կեանքի ցաւի ցակ ոսկեւող երազ:

Դու տենչացել ես լոյս-ափերի մէջ՝ քեզ իրեն կանչող աղբիւրի երգին,
Անուշ արտասուել երկնային կրծքին եւ անմահութեան ցողն ես երազել.

Բայց սերք կնոջ ծառաւած հոգաւդ աղ-չուր է ցալիս, որ միշտ տոչորուիս.
Հուր տաքանքի մէջ յաղթական կնոջ մարմինը լիզես եւ չյազեմաս:

Օ՛, կնոջ մարմի՛ն, պագո՛ւս, օձեղէ՛ն, դիւական անօր չարի, ոնիրի,
Դու, որ մտեղէն դառն հանոյքով խաւար ես դարձնում արեւը հոգու:

Ասում եմ սերք՝ յալիսեան խոցող, յալիսեան այրող ովկիանք կրքի,
Այդ փողոց քոյնը, որով արքայը ստուկ է դառնում եւ կամ բռնակալ:

Ասում եմ սերք՝ մահի պէս անգութ, միշտ թեղմամբող չարիքը անսանձ,
Աղբիւրն անսպառ որ կուտակում է աշխարհի վրայ սիւմբ եղեռնի:

Ասում եմ կնոջ, համբոյրը նրա, զարեւում եմ շողում, պիղծ գգաւնքներից,
Փախչում եմ նրա հանին-մահինից եւ անիծում եմ երկունքը նրա:

Երկունքը դաժան եւ յաւերժական, որ հեղեղում է վսառն իժերի,
Որոնք խալքում են բզրկսում իրար, տափանքով ժահրոտ աստղերը պղծում.

Միկա՛յ է նա, ով հայր է լինում, ով երջանկաւէս ոչնչութիւնից,
Գոյութեան կոչում քուտ հիւլէին եւ գլխին վառում Գեհենն կեանքի:

«Իմ հայրը իմ դէմ մեղանչեց, սակայն ես ոչ ոքի դէմ չմեղանչեցի». [*]
Այս իմ կտակը քող գրկի շիրմիս, եթէ ունենամ շիրմ լուսնի ցակ:

Այնքան ժամանակ, որքան որ ծովը կը փառէ գմբուխս ավերն Հէջազի,
Ես ես չեմ դառնայ կնոջ մօտ երբեք, ես չեմ կարօտայ քովչանքին նրա:

Կը գգեմ վայրի տատակը դժնեայ եւ կ'համբուրեմ փեքը նրա:
Գլուխս կը դնեմ այրող ժայռերին եւ կու լամ նրանց ջերմ կրծքի վրայ... »:

Եւ փառաւանք մեղմիկ ղողանջով չափում էր համբէն ոլո՛ւր ու մոլո՛ւր,
Հանգիստ ու անդորր գնում էր առաջ դէպի անապա՛ս, ոսկեղէն հեռո՛ւն:

Ջանգակներն, ասես, հեկեկում էին եւ ծորում հա՛ս հա՛ս հնչում արցունքներ,
Քառաւանն ասես, լալիս էր անուշ, ինչ որ Մահարին սիրել, քողել էր:

Եւ զեփիւռների սրինգները մեղմ զեղգեղում էին Շաբիներն անու՛շ,
Սիրոյ վերքերի, վաճա՛կ կարօտի եւ երազական բնուշ քախժանքի:

Եւ Աբու Լալան խորհում էր մուայլ եւ նրա վիշտը անմա՛յր եւ անվերջ,
Ինչպէս իր ուղին, որ գալարում է, ձգում է, անմայր եւ վա՛խճան չունի:

(*) Այս տողը գրուած է բանաստեղծի շիրմին վրայ:

Իր հոգու խորքում թախծում էր անյոյս Աբու Մահարին օրե՛ր, գիշերնե՛ր,
Հայեացքը յառած անյայտ աստղերին հիւսելով անծայր հանապարհի հետ:

Եւ ետ չէր նայում անցած համբէլին եւ չէր փստսում թողած անցածին,
Ողջոյն չէ՛ր վերցնում, ողջոյն չէ՛ր տալիս անցնող ու դարձող փառաւաններին...:



Եւ փառաւանը Աբու Լալայի աղբիւրի նման մեղմ կտրկաչելով,
Հեզ լուսնկայի շողերի միջով փայլում էր առաջ հանգիստ ու անդո՛ւր:

Եւ լուսինն, ինչպէս ջէննաթի մասաղ փերիի կուրծքը՝ պայծա՛ռ, լուսափա՛յլ,
Մերթ ամաչելով պահում էր ամպում եւ մերթ քրքուն շողում էր չճաղ:

Ծաղկունքը բուրեան նիրհ էին մտել՝ զարդալաւ շեղ աղամանդներով
Գուրգուրում էին ճնճուց մրմունջով ծիածանաձեւ հաւերը իրաւ:

Մեխակի բոյրով հովն էր փսփոսում հէփեաթներն հազար ու մէկ գիշերուայ,
Արժան ու նոսր անո՛ւշ բրնի մէջ օտուում էին համբէլի վրայ:

Հովի գրոյցին ականջ դնելով Աբու Մահարին խօսում էր անձայն,—
«Աւխարհն էլ ասես, մի հէփեաթ լինի՝ անսկիզբ, անվերջ, շեղ, դիւրական:

Եւ ո՛վ է հիւսել հէփեաթն այս վսեմ, հիւսել աստղերով, բիւր հրաճներով,
Եւ ո՛վ է պատմում բիւր բիւր ձեւերով՝ անդո՛ւլ եւ անխո՛նջ այսպէս թովչանքով:

Ազգեր են եկել, ազգեր գնացել եւ չեն ըմբռնել իմաստը նրա,
Բանաստեղծներն են փոքր ինչ հասկացել եւ թոթովում են հնչիւններն անմահ:

Ոչ ո՛ր չէ լսել սկիզբը նրա, եւ չէ լսելու վախճանը նրա,
Ամէն հնչիւնը դարեւ է ապրում, ամէն հնչիւնին վերջ, սկիզբ չկայ:

Բայց ամէն մի նոր ծնւածի համար նորից է պատմում հէփեաթն այս շեղ,
Նորից սկսում եւ վերջանում է ամէն մի մարդու կեա՛նքի հետ մէկտեղ:

Կեանքը երազ է, աւխարհը՝ հէփեաթ, ազգեր, սերունդներ—անցնող փառաւան,
Որ հէփեաթի մէջ, վառ երազի հետ փայլում է անսես դէպի գերեզման:



Կոյր ու զուլ մ'որդիկ, առանց երազի, առանց լսելու հեկաթն այս ոսկի,
Ի՞նչ կ'աղորդից պատառ է՛ք հանում եւ ի՞նչ հրաւրում դէպի գերեզման:

Ձեր օրէնքները—լուծ ու խաւազան եւ անել մի ցանց խօսական սարդի,
Եւ որոնց ժահրով թունաւորում է՛ք երազն այս գողօրդիկ, հեկաթն այս վսեմ:

Եղկելի մարդի՛կ փոշի կը դառնան ձեր չար սրտեր, ձեր գործեր սին,
Եւ ժամանակի ձեռքը անհարբէր կը սրբէ, կ'ալիւ ձեր հեկաթն արեւմտ:

Եւ ունայնաշունչ հողմը կը շաչէ ձեր գերեզմանի քարերի վրայ,
Իսկ վայելելու դուք միշտ ապիկար երազն այս չնաղ, հեկաթն այս շեղ...:

Գոհար ասդերի քարաւանները քափառում էին երկնի ճամբէով,
Եւ ղողանջում էր ողջ երկինքն անհուն՝ ասդերի շեղ. անէջ զնգոցով:

Եւ արար աշխարհ լցւած էր, դիւրում ղողանջիւններով յաւէ՛րժ երկնայի՛ն,
Եւ վերասլաց լսում էր հոգով Աբու Մահարին վսեմ ղողանջին:

— «Գնա՛, քարաւան, մեղմ, հնչիւններդ հիւսելով երկնի լոյս ղողանջի հետ,
Վիշտ քուր հովին, քայլէ՛ք բնութեան ծոցը մայրական եւ մի՛ նայիր ետ...:

Տո՛ւր ինձ լուսազգեստ մի հեռո՛ւ եզերէ, անյա՛յտ, հեռաւո՛ր, մեհաւո՛ր ափեր,
Սուրբ մենակութի՛ւն, դու իմ օտգիս, դո՛ւ երազների աղբիւր զովաւունչ:

Լուսքեան երկինք, խօսի՛ր դու ինձ հետ ասդերիդ լեզուով եւ ամոթի՛ր ինձ,
Գուրգուրիւ հոգիս՝ աշխարհից խոցւած, մարդուց խայրւած հոգիս վիրաւոր:

Իմ մէջ այրում է մի անյաղ կարօտ, յաւիտեան լացող կարեկից մի սիրտ,
Եւ իմ հոգում կայ մի շեղ երազ, եւ սուրբ արտասուք, եւ սէր անսահման:

Ոգիս ազատ է, եւ չեմ հանդուրժում իմ վերայ իշխող ո՛չ մի զօրութեան,
Եւ ո՛չ մի սահման, եւ ո՛չ մի օրէնք, ո՛չ չար ու բարի եւ ո՛չ դատաստան:

Իմ գլխու վերեւ չպէ՛տ է լինի ո՛չ մի հովանի, ո՛չ մի իրաւունք,
Եւ իմ կեանքից դուրս ամէն ինչ բանդ է, եւ սրկացում, եւ բռնադատում:

Եւ կ'ուզեմ լինել անսահման, ազատ, անպարսք, անիշխան, այլ եւ անասում, չոգի ս
հենչում է միա՛յն, միմիա՛յն անհուն, անպարփակ մեծ ազատութեան:»

Եւ քարաւանը քայլում էր առաջ եւ նրա վերեւ շողողում էին

Մանկան ծպիտով ասդերը պայծառ — այն յաւերժական ասդերը ազատ:

Ջուլալ գիշերին դիւրական ցոլով փայլում էր ճամբէն փերուզեայ հեռում,
Եւ քարաւանը օրօ՛ր ու շառ՛ւր քայլում էր անդորր փերուզեայ հեռուն...:



Գիշերն անարկու, ե՛ւ սեւ, ե՛ւ հսկայ մի թռչունի պէս թեւերը փռեց,
Անծիր թեւերը իջան, ծածկեցին փառաւան, ուղին եւ դաշտերն անափ:

Եւ հորիզոնից մինչ հորիզոններ մուշկ ամպերով երկինքը լցւեց,
Ձէին շողաղուծ լուսին ու աստղեր, խաւարն, ասես թէ՝ խաւարով պատած:

Եւ հողմերն անեղ նժուղների պէս՝ սանձաւորակ վայրի արշաւում էին,
Յորձանքներ տալով. եւ հողմն ու փոշին այրած դաշտերից խառնում ամպերին:

Հազար ձայներով եւ մահասարսուռ շառաչում էին եւ աղաղակում,
Ասես, վիրաւոր զազաններ էին, մոնչում-ռոնում հողմերի բերնով:

Եւ ձորերի մէջ գալարում էին եւ արմատենու անտառների մէջ,
Հեծեծում էին հողմերը խուռ, ասես թէ՝ մի սիրտ ողբալիս լինէր:

— «Գնա՛. փառաւան, հողմերի դիմաց անցկուն գնա՛, փայլէ՛, կանգ մի՛ առ.
Այսպէս եւ խօսում իր սրտի խորքում Աբու Մահարին, մեծ բանասէղծը.

Շառաչէ՛ք գլխիս, ամենի հողմեր, դու՛ք, մշրտիկներ. պայթեցէ՛ք գլխիս,
Ես բաց ճակատով ձեր դէմն եմ կանգնած, զարկեցէ՛ք ճակչիս, ես վախեցող չեմ:

Ես ես չեմ դառնայ պիղծ փաղափները, ուր բազմաժխտ կրքերն են եռում,
Քաղաքներն արնոս, ուր մարդը դաժան յօռնում է միտ իր նմաններին:

Իմ անունն զլուխ, դու տուն չես դառնայ, ինքդ մարեցիր օճախդ հայրենի,
Վա՛յ նրան, ով որ տուն ու տեղ ունի, կապուած է շան պէս իրեն տան շեմքին:

Արշաւէ՛ք, հողմե՛ր իմ հոր տան վրայ, փանդէ՛ք, աւերէ՛ք հիմքերը նրա.
Եւ փոշին ցրէ՛ք մեծ աշխարհով մէկ, — անծայր ցամաքն է իմ տունը հիմա:

Մենակութիւնն է իմ հայրենիքը, երկինն աստղաբիք — յարկա հայրական,
Եւ փառաւանն է իմ տունը հիմա, եւ իմ հանգիստը — ցամաքն անկայան:

Դու կախարդ ճամբայ, յաւիտեան անյայտ՝ յաւիտեան դիտող իմ նոր հայրենիք,
Տա՛ր փնձ, — իմ սիրտը յաւիտեան լացող, այնտեղ, ուր աչքը չի տեսել մարդու:

Քարեկամներից հեռո՛ւ տար դու ինձ, որոնք անկետում մոծակների պէս
Հետեւում են քեզ, երբ արիւն ունիս, իսկ երբ ցամաք ես, կ'մոռանան քեզ:

Իմ ընկերներից հեռո՛ւ տար դու ինձ, նրանց սուտ սիրուց դու պատշապանի ինձ,
Ես ոտխնդրիս լաւ եմ ճանաչում, գիտեմ պատշապանել նրանց դառնոյնից:

Իմ բիւր վերերը ո՞վ կ'նիւթէր ինձ, թէ չլինէին ընկեր, բարեկամ,
Որոնք նամբոյրով սիրտ բացեցին, որոնք համբոյրով խայթեցին նրան:

Ի՞նչ է ընկերը — յաւէտ բամբասող, միակ խուզարկու հետքիդ, փայլիդ,
Ծանօթ շներ չեն հաչում վրադ, ծանօթ մարդիկ են հաչում քո վրայ:

Ի՞նչ է ընկերը — լաւիդ նախանձող, նենգ ու չարակամ, մահիկնդ պղծող,
Իմ ազնիւ ծոցում ես օ՛ն սնուցի... քոնի՛ր, փառաւան, էլ ես մի՛ դարձիր:

Եւ ո՛ւր որ կ'երթաս, այնտեղից նորէն գնա՛ ու գնա՛ առանց հանգրուան,
Իմ բարի ճամբայ, տա՛ր ինձ, կարցո՛ւ, չի իմ, տանջանքս ո՛չ ոք չտեսնի:

Ի՞նչ կայ մեր ետեւ, որ մեր կարօտով ես դառնանք նորից, իմ փառաւանս,
Թողել ենք մենք վա՛ռք, գանձ ու հայրենի՞ք, թողել ենք օրէ՞նք եւ արդարութիւն:

Թողել ենք մարդկա՞նց. համայնք ու ամբո՛խ, դաս ու իրաւոնք եւ իշխանութիւն,
Քայլէ՛. կանգ մի՛ առ — թողել ենք միայն շղթայ ու կապանք, կեղծիք ու պատրանք.

Եւ ի՞նչ է փառքը, — այսօր քեզ մարդիկ կ'բարձրացնեն եղջիւրներից վեր,
Վաղը նոյն մարդիկ քեզ վար կ'նետեն սմբակների տակ նմելու համար:

Ի՞նչ է պատիւը, յարգանքը մարդկանց, — պատում են ոսկուց եւ վախից միայն,
Իսկ երբ սայթեցիր, կոշիկիդ փոշին մեծ մարդ է դառնում եւ քեզ հարուածում:

Եւ ի՞նչ է զանձը, որով յիմարը տիրում է մարդկանց, եւ սէր եւ հանճա՛ր. —
Յիւրաւորների փամած արիւնք, որի արտասուքն, մեղեղների միս:

Հայրենիքն ի՞նչ է — յաւերժական բանդ, պատերազմի դա՛ւս, նախնիք ու արիւն,
եւ նրա համար անխիղճ հօգորք բիւր կառավարներից բուրգեր է կանգնում:

Ահում եմ, աւա՛ղ եւ հայրենիք, պերճ արօտավայրն լիրք հարուսների,
Որի հողն արնոտ անդուլ հերկողը չոր քար է կրծում իր հացի կողքին:

Ահում եմ, ասո՛ւմ ամբոխին ռամիկ, մեծ յիմարն է նա, ստուկ բռնակա՛լ,
Ոգին հայածող բռնութեան խաբիսիս, յիմարութեան մէջ զօրաւոր գազան:

Ի՞նչ է համայնքը — քանամու բանակ եւ մարդը այնտեղ շղթայած գերի,
Ե՛րբ է հանգուժեղ հոգեւոյ թռչիւնն եւ սլացումին նա վեհ մտքերի:

Նողկալի համա՛յնք, հեղցույ՜չ չ օղա՛կ, քո շարն ու բարին — անեղ խաբազան,
Մի անհուն մկրտս բոլորին խուզող՝ միահաւասար եւ միանման:

Ի՞նչ է օրէնքը՝ բիրտ ուժեղների այդ սուրը դաժան՝ վարդկանցից օրհնած,
Անգորի գլխին կախած յաւիտեան, խեղճին խողխողող, հօգորին պաշտպան:

Բոլոր գայրոյթով զգո՛ւմ եմ, ասում մարդկանց օրէնքը եւ իրաւունքը,
Օրէնքով մօրթում, բռնաբարում են եւ իրաւունքով լլկում, կեղեքում:

Տա՛ր ինձ, ազատի՛ր, ծածկիր ինձ անհեռ մարդկանց արիւնոտ արդարութիւնից,
Թող որ վազբերն իմ սիրտը պատեն, արդարութիւնը քան թէ փրկէ ինձ:

Զգո՛ւմ եմ ասո՛ւմ իշխանութիւնը — պատերազմների յաւերժ յերիւոդ,
Անյա՛գ վաշխառու, անկուտ ձրիակեր, արեան բաղանիք, սերունդներ լափող:

Անցած դարերի գալիք դարերի մեծ դահլիճն է նա եւ մեծն աւազակ,
Սարսափներ վիժող, ռիսակալ վոհմակ, հազարանիւրան մոլի բորենի:

Նա փռում է միտ մեր ուսերը վար, ամէն ուր հասնում նզմում է մարդուն,
Եւ հրէ՛ի պէս կրծիս է նստել, բռնեցքն է անեղ սղմել նակասիս:

Եւ ամէն ինչ է իշխանութիւնը — իրաւունք, օրէնք եւ արդարութիւն,
Նա ինքն է խիղճը, եւ շարն ու բարին, իսկ դու — գերեզման, դու — ոչնչութիւն:

Մեր ամէն բայլին շղթայ է դրել, փականք է դրել մեր լեզուին, մտքին,
Եւ արդարութեան դաժան անունով կախում ու մաշկում ծերին, մանուկին:

Ապիկար մարդի՛կ, ստուկ ու վախկո՛ւս, ո՞վ սեց սուրը նմանիդ ձեռքին,
Ո՞վ սեց նրան վրէժի իրաւունք՝ իշխել, խռովողել իր նմաններին:

Տա՛ր ինձ, քաւաւան, իժեքին յանձնի՛ր, քաղիւր հեղ սիրտ աւազների տակ,
Տա՛ր ինձ, ազատի՛ր իշխանութիւնից, ազատի՛ր նրա հովանուց վայրագ...:

Խօլ կայծակները հրեղէն սրով ծւարում էին վաշտերն ամպերի,
Եւ արշաւասոյ՝ փռում էին հեռաւո՛ր, անտես լեռների ճակսին:

Եւ մերիկները մանչում էին, արմաւն ու նոնին շաչում, շառաչում,
Եւ քաւաւանը արա՛գ, սրբնթա՛ց, զի՛լ, քաւաւանի վազում էր, բուշում:

Վազո՛ւմ էր, բուշո՛ւմ, զրնգ հա՛ զրնգ. փռու ամպերով ծածկելով ճամբէն,
Ասես, փախչում էր շար իշխանութեան փնոտ բռնեցքից, որ չհասնի իրեն...:



Եւ միջօրէի բարկ արեւի տակ խիստ բուռն էին նարնիս ու զաքար.
Եւ փառաւանք փռու մէջ կորած, ֆրանքոս, յոգնած ֆայլում էր դանդաղ:

— «Գնա՛, փառաւան, ի որակ ու մերիկ նեղեցիով անցի՛ր, մօր անապատ.
Այսպէս էր խօսում զայրացած սրտում Աբու Մահարին, մեծ բանաստեղծը:

Թո՛ղ անապատի տափ հողն իմ դէմ գայ, աւազի վրայից հետքերս չնշէ,
Որ մարդը երբեք տեղս չզսնի, իմ շնչած օդը մարդը չը շնչէ:

Այնտեղ մարդկանցից ապահով կըլնեմ, էլ ո՞ւմից միթէ ես երկիւղ ունեմ,
Թող որոտընդոտ մոնչիւններով վագր ու առիւծ արեւուն իմ դէմ:

Տեսնում եմ անա՛ շէկ առիւծներին դեղին շեղջերից աչիս եմ նայում,
Տեսնում եմ նրանց, որոնց ոսկեղէն բաշերից հողմը կայծեր է պոկում:

Արի՛՛ք, կանչում եմ, ես փախչողը չեմ, արի՛՛ք. լափեցէ՛ք սիրտս վիրաւոր,
Ես ես չեմ դառնայ մարդկանց մօտ երբեք, դուռը չեմ բախի մարդու նեղատու:

Մարդկանց մօտ պէտք է աշայուրջ լինիս միտս ոտի վրայ եւ սուրը ձեռքիդ,
Որ քեզ չ'ըլկեն, քեզ չ'յօռնեն քէ՛ բարեկամդ եւ քէ քեցամիդ:

Մարդիկ ի՞նչ են որ ... դիմակած դեւեր, ժանիքներ ունեն, անտես ճիրաններ,
Ամբակներ ունեն եւ որոնող են, նրանց լեզուն — քունատու սուտեր:

Եւ ո՞վ են մարդիկ. մի պատառ հացիդ հազար աչք ձգող, ֆրիւնդ լափող,
Անկումիդ ուրախ, մասնիչ, ուրացող, աղուէսների հօտ եւ դահի՛ն, դահի՛ն:

Թշուառութեան մէ՛ջ, տղաւորութեան մէ՛ջ փոքրոգի՛, ժմո՛ղ, վաճառու՛ղ, ֆո՛ւ,
Հարսնութեան մէջ անգո՛ւք, մեծամի՛ս եւ ամբարտաւան եւ վրիժառու:

Համբերով մէկ մէկ անքիւ ֆայլեր իմ փառաւանի, իմ անծա՛յր նամբու,
Անքիւ ֆայլեր չեն հասնում չափին մի օրում գործած յանցանքին մարդու:

Ասում եմ անա՛ եւ արեւելին, հիւսիս հարաւին եւ արեւմուտին,
Որոնց հողմերը՝ իրար հետ ներհակ՝ լսում են մէկտեղ իմ արդար խօսքին:

Լսէ՛ք ու տարէ՛ք խօսքս հեղէն, թո՛ղ ծովերից ծով աշխարհ իմանայ,
Որ աւելի վա՛ս, աւելի զազի՛ր, փան մարդը դաժան՝ այդ մարդն է նորից:

Սիրում ե՛մ, սիրում զայլին, չախկալին, բայց մարդուն սիրել չեմ կարող երբեք:
Ո՞վ է ինձ տանջել նրա չափ անգութ, եւ ո՞վ է լակել նրա չափ արիւն:

Լսե՛քն աշխարհում զոհում են, մեռնում վաշերի համար, եւ վաշերն յաւերժ
Տանջում են, լրկում մի բուռ լաւերին,— եւ կեանքի արտում որոմն է անում:

Ապիւրտ աշխա՛րհ, ուր հզօր ոսկին դարձնում է գողին պատաւոր, ազնիւ.
Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրիճ, տղային՝ չնաղ եւ պոռնիկին կոյս:

Մարդկային աշխա՛րհ, ուր ամենուրեք հզօրի առաջ թոյլը մեղաւոր,
Եւ մարդը տղա՛ ինչ որ անում է այս գարշ աշխարհում տոսկ ճիւրի համար.

Սոսկ ճիւրի համար. նրան միտ գերի, եւ քարն արիւնտ աստաւածացնող.—
Ահա մարդը միտ՝ պատկերն Ասծու, սակայն իրապէս Շէյթանի վիժումը:

Այնքան ժամանակ, որքան աստղերը անշէջ քարքում են լուռ անապատին,
Եւ զալարում են շեղջերն աւազի, շո՛ւմ ու նշո՛ւմ նման օձերին.—

Ես չեմ ուզեմայ ողջունել մարդկանց, դէպի համայնքը ես ես չեմ դառնայ,
Բո՛րեքինքը թող ինձ յօռնեն, բոցոտ հողմերը շաչեն ինձ վրայ:

Փախի՛ր, փառաւան, այդ պոռնկութեան լպի՛րս ու արբելու, ցո՛փ խնձոյճներից.
Սէի եւ կեղծի հրապարակներից եւ վաճառանքի պիղծ շուկաներից:

Կնոջի՛ց, սիրո՛ց, համայնքից փախի՛ր, արդարութիւնից՝ վրէժից փախի՛ր,
Փախի՛ր ընկերից եւ հայրենիքից, փախի՛ր, կանգ մի առ մարդկանց աստիճան:

Գնա՛, փառաւան, սմբակներից տակ տոբի՛ր, կոխի՛ր. օրէ՛նք, իրաւո՛ւնք,
Եւ հանապարհիդ փոշիով ծածկիր, քէ չարն ու բարին, քէ իշխանութիւն...

Իրենց աղեղի պարանոցները՝ ուղերը լարած նետերի նման,
Զիլ վազում էին եւ իրենց յետից թողնելով անձայր փռու փառաւան:

Զիլ վազում էին խանձուած դաշերով դէպի անյայտ, դէպի հեռաւան,
Եւ ծածկում էին փռու ամպերով անձիր դաշերը, փաղափ ու տան:

Կարծես՝ վախեցած վախչում էր արագ, առանց հանգրուան, Աբու Մահարին.
Կարծես՝ օրէնք, կինն ու համայնքը նրան կրքնկլոխ հետեւում էին:

Եւ ֆարաւանը զրնգ հա զրնգ՝ առանց նայելու անցնում էր անդարձ,
Բուրգերի տակով մեծ ֆաղափների՝ հացի ու կրփի ժխորով լցւած:

Վազում էր արագ՝ յիմարութեան մէջ դարեւ ֆարացած գիւղերի մօտով.
Վազում էր անդուլ դէպի անապատ ոսկէժող աստղի անգուսպ կարօտով:

Քարաւանն հերոս՝ օրեր — գիշերներ չափում էր ճամբէն ոլոր ու մոլոր,
Եւ հոգու խորում Աբու Մահարին խորհում էր ցասկոս՝ ճակատը խոլոր:

Եւ յալիս էր նա առանց օրցունքի եւ նրա վիշտը անհուն ու անվերջ,
Ինչպէս իր ուղին, որ գալարում է, ձգում է անձա՛յր եւ վախճան չունի:

Եւ ետ չէր նայում անցած ճամբէին եւ չէր օրհնում քողած, անցածին,
Ողջոյն չէր վերցնում, ողջոյն չէր տալիս անցնող ու դարձող ֆարաւաններին...:

ՎԵՑԵՐՈՐԴ ՍՈՒՐԱՆ

Եւ ֆարաւանը Աբու Լալայի Արաքոստանի մեծ անապատի,
Դարբասների մօտ կանգ առաւ յոգնած...

Եւ անապատի հորիզոնների հեռո՛ւ ափերը հրդեհում էին,
Մութն հաւաքում էր փէշերը քաւեայ, բոցերով բոսոր երկինքն էր ծփում:

Եւ Աբու Լալան ֆարաւանի մօտ նսեց մեհաւոր, հանգիստ եւ պայծառ.
Ոսկի ժայռերին գլուխը յեցած՝ հայեացքը սուզած լուսեղէն հեռուն:

— «Օ՛, ի՛նչ ազատ եմ, անսահման ազատ, մի՞թէ կարող է անապատը մեծ,
Պարփակել, գրկել իր ափերի մէջ ազատութիւնս՝ անե՛զր եւ անհուն:

Ոչ մի մարդկային ձեռք ինձ չի հասնի, ո՛չ մի մարդկային աչք ինձ չի տեսնի,
Օ, ազատութի՛ւն, դու դրախտային չմնաղ վարդերի լուսեղէն բուրմունք:

Քո լոյս վարդերով դու պսակի՛ր ինձ, վառի՛ր ջահերդ իմ իշուր հոգում,
Օ, ազատութիւն, դու դրախտային վառ բլուրների անմահ Այ Կօրան:

Զմնաղ անապատ, դու միայնութեան ոսկեղէն աշխարհ, քեզ հազա՛ր ողջոյն,
Անառատ հողե՛ր, ուր մարդը մարդուն չէ լրկել երբեք, օրհնեա՛լ լինիք դո՛ւք:

Տարածի՛ր անձիւր, փռի՛ր աւազիդ անափ ծովերը աշխարհի վրայ,
Ծածկի՛ր ողջ մարդկանց, ֆաղափները ծանց, ծածկի՛ր աւաններ, քեզ ու խրհիքներ:

Վիշապ-հողմիդ հետ ազատութիւնը քո՛ղ զահակալէ աշխարհի վրայ.
Եւ ոսկեվառէ վսեմ արեւը աշխարհափիւռ ազատութիւնը:

Հազար ու հազար հրաշալիքներով եւ հրաբուրբ հրապոյրներով
Ոսկի վարսերը անձայր տարածած՝ Շէմս Արեւն ելաւ, Աստուծոց հօր:

Եւ վեհ արեւի աչքերի առաջ փուլեց, ծաւալեց անապատը մեծ,
Վառ վառ հուրհրաց, ինչպէս թիսանեան, հսկայ առիւծի ոսկեղէն մորթի.

— «Սալա՛մ քեզ, Արե՛ւ, շիւրք բիւրաբիւր, դո՛ւ, իմ անմահ մայր, մայրական դու գիրկ,
Դու, մի սկ բարի, դու յաւէտ գթո՛ս, դու միակ իմ սէր, դու միայն սո՛ւրբ, սո՛ւրբ,

Դու, որ հիացնով եւ անմահութեամբ լցեցիր հոգին մեծ Զօրաստի,
Ահա՛ իմ հոգին — մի ծարաւ բողբոջ, քափի՛ր նրա մէջ քո պաւսպուր գինին:

Տիեզերական դու անհուն բաժակ՝ ոսկի արեցման եւ երանութեան,
Դու՝ անհուն բաժակ հրապոյրների եւ հրճւանքի անմահ գինով լի:

Հարբեցրո՛ւ ինձ, հարբեցրո՛ւ ինձ, քո անմահ գինով հարբեցրո՛ւ ինձ,
Մոռանամ մարդուն, վիշտն ու չարիքը, սուսն ու մռայլը մոռանամ յաւէ՛րժ:

Տիեզերական հազարանգղէս դու մեծ խրախնամք, դու, բարի արեւ,
Խաւարների դէմ անյաղք ախոյեան, դու Աստուծոց հօգօր, դո՛ւ ուրախութի՛ւն:

Քո երջանկութեամբ, քո յաւերժութեամբ, քո պայծառութեամբ հարբեցրու ինձ,
Եւ քո բուրակից լոյս անուրջներում տո՛ւր ինձ անցեալի անզարք մոռացում:

Դո՛ւ միակ բարի, դու յաւէտ գթո՛ս, դո՛ւ միակ իմ մայր, դու միայն սուրբ, սուրբ,
Մահը խորհակող. զարուհների մա՛յր, դո՛ւ գերահաւ, մի՛ակ գեղեցիկ:

Ես սիրո՛ւմ եմ քեզ, ես սիրո՛ւմ եմ քեզ, կիզի՛ր, խոցի՛ր ինձ հրեղէն սիրով.
Եւ ոսկեմանանջ վարսերդ շեղ փռի՛ր ինձ վրայ եւ գուրգուրիր ինձ:

Եւ արիւնքի՛ր իմ շքանքները քո հրեղեմովաւ լոյս համբոյրներով,
Երջանկասփիւռ քո հուր գիրկը բա՛ց, ես սիրաբոլորմ բռնո՛ւմ եմ քեզ մօտ:

Իմ ազնիւ ուղտե՛ր, ռսփ կանգնեցէ՛ք, դարձաւ Մահարին իր քառաւանին,
Եւ քօթափեցէ՛ք ձեր սրունքներից ստուկ աշխարհի զագրելի փռչին:

Օ, վերջին անգամ լսէ՛ք իմ խօսքը. — ասում եմ ես ձեզ, հեռաւոր մարդիկ՝
Գաւառում եմ, ասում ձեր կրօնները, ձեր լաւն ու վատը, ձեր չարն ու բարին:

Որոնք միմիայն շղթայ են կռում եւ ստիպեան զնդաններ կռփում.
Օ, վերջին անգամ ասո՛ւմ եմ ես ձեզ, եւ յաւերժ, յաւերժ ասո՛ւմ եմ ես ձեզ:

Եւ քող խլանան իմ ականջները՝ յաւէտ չլսեմ աղմուկն աշխարհի,
Ցաւէտ կուրանամ աշխարհի համար, եւ ես չնայեմ շեսնելու մարդկանց:

Շարժիք, քառաւան, դարե՛ր եւ դարե՛ր քռիւր, սլացիւր արեւը դէպի,
Նրա լուսեղէն, բոցեղէն գրկում, որ արեւանամ եւ յաւերժանամ:

Օ, իմ մայր արեւ, քո ոսկեփափուր ծիրանիդ ձգիր ուսերիս վրայ,
Որ ես յաղթական, լոյս-փառներիդ մէջ սլանամ յաւերժ դէպի, դէպի քեզ...»

Եւ ուղտերն, ասես, ոսկի մակոյկներ, հուր ալիքներ ծով-անապատի
ձեղքելով արագ սլանում էին դէպի բոցեղէ՛ն, ոսկեղէ՛ն հեռուն:

Եւ ոչ մի սամաւ հրաւունջ թելով չէր կարող հասնել նրանց արեւին,
Նրանց քռիչքին չէր կարող հասնել սլաքն նետի վայրի բեղունին:

Օսկաններից մայր արմաւենին վառ հէֆեաթների լոյս փերիներից
Համբոյր էր բերում, սիրոյ ողջոյններ, անո՛ւս դալլալում նրա ականջին:

Բայց Աբու Լալան չէր ուզում լսել բնութ սօսափին, սիրոյ ողջոյնին,
Թռչում էր անդուլ դէպի արեւը, եւ ինքն էլ պայծառ արեւի նման:

Նրա ետեւում լոկ անապատն էր փռւած հողանի լոյսի գրկի մէջ.
Իսկ գլխի վերեւ արեւն էր նագում շալիւղեայ վարսով եւ լուսափրփր:

Ուղտեր արձակ պարուսաններով հուժկու, մոլեգին, չայնպէս խօլական,
Սլանո՛ւմ էին, զիլ բռնո՛ւմ էին հրեղէն քափով խենթ ու խելագար:

Եւ արեգական վառ ցնցուղի սակ բոցկլում էին ուղտերը զարք,
Եւ բարձրադուանջ կալլակում էին զանգակներն ազա՛ս, պայծառ, ցնձագին:

Եւ ոսկեփափուր ծիրանին ուսին Աբու Մահարին յաղթական եւ վեհ՝
Թռչում էր աննիւնջ, բռնում էր անխոնջ դէպի արեւը, անմահ արեւը...:



Ծ Ա Ն Օ Յ Ո Ւ Յ Ի Ի Ն

Քասիս	Երկտղանի. երկայնաձիգ գրուած պօէմ, արաբերէն
Սուրահ	Գլուխ, հասոյւած
Գազէլ	Սիրոյ երգ
Իբլիս	Դեւ, սասանայ
Հէջազ	Արաբական ծովեզերք, նահանգ
Շարֆի	Երգ
Նարնիս	Նարկիզ [ծաղիկ]
Զարար	Ծէքրօն [բոյս անապատի]
Շէմս	Արաբերէն արեւ
Սալամ	Ողջոյն
Շիւքր	Փառք, գոհութիւն
Սամուս	Անապատի տափ հողմ, խորտակ
Ս.լ-կորան	Ղուրան

ԱՐՈՒ ԼԱԼԱՅԻ ՎԵՐԱԴԱՐՁ

« Եւ համբաւ ծփաց ականջէ - ականջ
Պողոտաներում ամբողջ ոստանի,
Թէ Աբու Լալան վերադարձել է
Պանդուխտ ավերից ակուրն հայրենի: »

— Մենք նանաչեցինք իսկ եւ իսկ նորան,
Տեսնողներն այսպէս պնդում են յամառ,
Թէեւ անցել են երկար տարիներ,
Երբ նա մեր միջից փախաւ զաղսնաբար: »

Տեսանք՝ յոգնաբեկ օրերի բեռից,
Մի աչքում արցունք եւ միւսում ժպիտ,
Բայց սուր կար մէջքին եւ քայլը քափով,
Հակասն հինաւուրց՝ անամպ ու վնիս: »

Եւ սրբին յենած՝ կանգնել էր մենակ,
Նայում էր շուրջը յաժող ամբոխին,
Ժպտում էր բարի, ողջոյն էր չայիս
Իրեն անծանօթ անց ու դարձողին: »

Եւ ուրիշները շատ վազէ - վազ
Զայնում են անցնում գոհնէ - գոհն,
Թէ Աբու Լալան օտար ավերից
Դարձել եկել է, դարձել եկել է . . . : »

1935

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Գ Բ Ա Դ Ա Ր Ա Ն

ST. NERSES SHNORHALI
LIBRARY

ARMENIAN PRELACY

500

ՀՀ Ազգային գրադարան



NL0344561

«ՄՇԱԿՈՅԹ» ԳՐԱՏԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. — **Ոսկի արիւիւն սակ** [Արձակ երկերու հաւաքածոյ]
Միսաք Մեծարեւնցի, 1934, Կ. Պոլիս 100 դր.
2. — **Զմրուխտէ պատմունան** [Ա. Ուղեւորութիւններ Բ.
Գիւղական պատկերներ, Գ. Արեւելեան Հեքեաթ-
ներ Գ. Արձակ բանաստեղծութիւններ] Թ. Ազատ-
եան, 1936, Սթանպուլ, էջ 191: 100 ,
3. — **Սբու Լալա Մահարի, Աւ. Իսահակեան** [Կենսագ-
րութիւններով եւ նկարներով] Ե. սպագրութիւն,
Սթանպուլ, էջ 32: 25 ,

— Մեծմամակ գնումներու համար բացառիկ գեղչ —

ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ ԳՈՐԾԵՐ

- I. Կամիսաա վրդ. քնարերգակ [Իր ինքնագիր տաղերը]
- II. Սիպիկ [Իր կեանքն ու գրական եւ հանր. գործունէութիւնը]
- III. Շարք Արեւմտահայ գրական եւ հանր. դէմքերու
- IV. Հայ աւուղներու եւ ժողովր. երգիչներու բուրբերէն երգերն ու ժա-
քանները
- V. Հաֆոց ժակահունները եւ անոնց կիրառութիւնը [պատմական ու-
սումնասիրութիւններ]
- VI. Մասթուս Զարիփեանի անսխալ երկերը
- VII. Գեղամ Թեղեան բանաստեղծութիւնները

➡ Մօտ օրէն լոյս կը տեսնէ «Մշակոյթ» Գրատան Հայ քերթերու եւ
պարբերականներու գրացանկը: